


կան լիցի ի միում հաստատութեան կամ ի ասն լինել երկու իշխանութեան, չհայեցեալ զի թէ Սինոդն ս. Եջմիածնի շրջաբերական հրամանօք իւրովք և թէ նախկին առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսն հանգերձ յանձնաժողովով ի հրահանգի երեցփոխանաց ի 1884 ամիս պարգեալ են զմիսս այնր յօղուածոյ, ասելով թէ յես ասնոյ ի ժողովրդոց զժուղթ համախօսական, կամ հուսարմաղիր պարսին ինդրել նաև զիմոյլաուութիւն Հոգեւոր իշխանութեան, վասն զի ինքնին բացայայտ է, թէ ժողովուրդն այնու ոչ ապ երեցփոխանին իրաւունս բացարձակ իշխանութեան ի վերայ գոյլց եկեղեցւոյ, զորմ ոչնչ զոյ ի նմին յօդ. կամ անտես առնելոյ զՀոգեւոր իշխանութիւնն, այլ միայն զբաւոր վտահութիւն առ երեցփոխանն ի ծանրակէիս գործս, և այն ըստ ինդրոյ վերջնոյն իրեւ ընտրելոյ ի նոցունց, ուստի և զայսչափ բաւական համարիլ ի փարատումն տարակուսանաց յիշեալ երեցփոխանաց. նոյնպէս և երեցփոխանին Մողեոյ ս. Վէորդ եկեղեցւոյ առ յայտարարութիւն իւր ի 29 Յունուարի տարւոյս թ. 1, հրահրելով զնոսա զամենեւին առ ճիշտ և անթերի կատարումն պարտաց պաշտօնի իւրեանց ըստ հրահանգաց և ցուցմանց Ատենիս, որք հիմնեալ են ի վերայ օրինաց, կանոնաց և աւանդութեանց եկեղեցւոյ, ևս և ի վերայ հրամանաց Սինոդի զիտելով միանգամայն, զի զսովորական ծախս ի տարւոջ և զայլ պատահական պէտս նորոգութեան, կարկատանաց և այլոց իրաց եկեղեցւոյ՝ ի քաղաքս մինչ ցերեխուն բուրլիս յիւրտքանչիւր նուագի և ի գիւղս մինչ ցտանն բուրլիս հոգալ զիտութեամբ և խորհրդով քահանայից. իսկ եթէ աւելի իցէ քան զայս՝ ինդրել զանօրէնութիւն սորին. զի զի՞նչ վրնաս իցէ, եթէ գործողութիւն երեցփոխանի յայտնի լիցի ամենեցուն թէ քահանայից, թէ ժողովրդեան և թէ Հոգեւոր իշխանութեան իւրեանց: Հինդերորդ՝ զայսմ անօրէնութեան, շրջաբերական հրամանօք ապ զիտել համայն երեցփոխանաց եկեղեցեաց վիճակիս ի կրկին յիշողութիւն նոցա զնախկին հրամանաց սորին, թէ տուելոց ուղղակի յատենէս և թէ հիմնելոց ի վերայ հրամանաց

Սինոդի ս. Եջմիածնի, ըստ այսմ զի մի մնաւցմամբ, կամ զանցառութեամբ այնոցիկ անկանխցին ընդ պատասխանաստուութեամբ, և զայնտիկ հրամանս առաքել առ նոսա ի նեոն Հոգեւոր կառավարութեանց և գործակալաց:

Ի բնագրին ստորագրեալ են՝ ասենապետ Կանխատորիայի Վէորդ արքեպիսկոպոս. Անդամբ Բաղրատ վարդապետ Գարրիէլ քահանայ Տէր Գարրիէլիանց և Զաքարիա քահանայ Զարդեղեանց. ասենապետի՝ Յ. Տէր-Եսայեանց:

5 Մարտի 1901 ամի

Համար է բնագրին. Անդամ Կանխատորիայի՝
Բաղրատ վրդ. Գեորգ Թաւաքալեան
Առեւտրոյի՝ Յ. Տէր-Եսայեան



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻԾԿՈՒԹԻՒՆԸ

- «Կուզէի լինել հայ աստուածաբան,
- «Նոր վերադարձած արտասահմանից.
- «Յոյց տալ խեղճ ազգիս դրբախաի ճամբան,
- «Ազատել նրբան քրաղիւմ մեղքերից» ...
- «Շատերի նման, և ինձ Մայր Աթոռ.
- «Կըտար, անկասկած, պաշտօն փառաւոր ...

Ա. ՄԱՍՆՈՒԵԱՆ

Մեր ականջները վաղուց են լեցուել աստուածաբանների հասցէին ուղղուած սրամտութիւններով. բայց վերելի տողերը, որ մտօրերս լոյս տեսած մի գրքոյիլ մէջ* կարգացինք պատահարար, կարճես անակընկալ էին մեզ համար և աւանձին կերպով վիշտ պատճառեցին. նորութիւն նրանց մէջ, ի հարկէ, չկայ, ոչ էլ իրենց բանաստեղծական նրբութեամբն են աչքի ընկնում. այնուամենայնիւ բանաստեղծութիւն են համարուում և

* «Գրիլ հանգանէր, Մոսկուս, 1901:

գրքի մէջ են, ուրեմն և ո՛չ առօրեայ հարցերի և անձնական տրամագրութեան արձագանգ, ինչպէս լինում են սովորաբար լրագրական թուղթիկի գիտադուրբիւնները, այլ ներկայ ժամանակում իշխող գաղափարների և հայեացքների արտայայտութիւն. ուստի թող տարօրինակ չլինի, որ մենք լուրջ խորհրդածութիւնների մի երկար շարք այդտողերով ենք սկսում: Ի՞նչ է նոցա իմաստը. բանաստեղծը կամենում է պատկերացնել ժամանակակից հայ հասարակութեան մի խումբ ներկայացուցիչների, որոնք կեղծ, գիւրիւն, ստոր միջոցներով գիրք ու ապահովութիւն են ձեռք բերում, մինչ իւր նման խկական աշխատաւորները չեն գնահատուած, և ահա առաջին տեղը հանդէս են գալիս Մայր Աթոռի աստուածաբանները: Եւ թէպէտ իրողութիւնն այն է, որ մինչև այժմ արտասահմանից Մ. Աթոռ վերադարձած էրէ՛ Լուսինի աստուածաբանները բանաստեղծի երեակայութեան արամագծօրէն հակառակ պայմանների մէջ են գտնուում, մենք համոզուած ենք սակայն, որ ո՛չ մեր լրագրական բանաստեղծներին և ո՛չ նոցա գիւրահաւան ընթերցողներին ո՛չ մի միջոցով այդ հասկացնել չենք կարող: Է. Թ. Ե. Ե. Ե. համար նոցա հարկաւոր է հռչակել, թէ աշխարհը լեցուել է աստուածաբաններով, իսկ նոցա դաւանամ սկզբունքը ստիպում է պնդանել, որ ամէն աստուածաբան ինքն ըստ ինքեան պորտաբոյծ պէտք է լինի: Մենք ևս ընդունելով, որ մինչև այդ սկզբունքը չարաբոյժի ո՛չ աստուածաբանների դէմ յարձակումները կվերջանան, ո՛չ քահանայական և ուրիշ շատ նման եկեղեցական ու հասարակական խնդիրներ, որոնք նոյն այդ կէտի շուրջն են պատում՝ իրենց լուծումը կստանան, կաշխատենք հարցը հիմնովին գնել և լուսաբանել: Իսկ հիմնական հարցն է մեր կարծիքով. արդեօք քրիստոնէութիւնը իւր որոշ տեղն ունի ժամանակակից քաղաքակրթական կեանքի մէջ, և իրաւունք ունի արդեօք յարատեւելու նաև ապագայում և իւր յատուկ դերը կատարելու:

Գուցէ շատերին կթուի, թէ այս հարցը սերտ կապ չունի աստուածաբանների գործունէութեան և ուրիշ նման խնդիրների հետ, բայց տեսէք ինչպէս է մտածում մեր ժամանակի կրթուած սերունդը: Նորա համար գրեթէ դաւանանքի արժէք ունեցող մի համոզմունք է, որ գիտութիւնը (իսկ գիտութիւն ասելով նա յատկապէս բնական գիտութիւններն է հասկանում) միջնադարեան խաւարը վատտելով մարդոց աչքը բաց է արել և ցոյց տաւել, որ գերբնական ոչինչ չկայ, և կրօնը իրեն վերաբերելու հաւատալիքներով մէկտեղ լով նախապաշարմունք է եղել, քաղաքակրթութեան որոշ շրջանում մարդկային կեանքի անցողական մի երեկոթ: Բայց որովհետև աշխարհը դեռ հարկաւոր չափով լուսուորուած չէ, կարելի է թոյլ տալ, որ քաղաքակրթութեան ստոր աստիճանի վերայ կանգնած մարդիկ պահեն առ ժամանակ իրենց այդ նախապաշարմունքները, մինչ այնպիսիները, որոնք գիտութեան պառկաները ճաշակած, ուսում ստացած լինելով հանդերձ, համարձակում են կրօնի անստեղծ հրապարակ գալ և հաւատալիքներից խօսել՝ գոյութեան իրաւունքից բոլորովին զուրկ պէտք է համարուին, որովհետև կամ նոցա սովորածն այնպիսի բան է եղել, որ նոցա միտքը լուսաւորելու տեղ աւելի ևս բթացրել է, կամ նոքա իրենք անագին ու խարդալի մարդիկ են, որ հակառակ իրենց համոզմունքի, հակառակ գիտական ճշմարտութիւնների մուրեքնում են ամբոխին և շահագործում նորա տկարամտութիւնը: Կարեւորն ուրեմն այստեղ այս կամ այն աստուածաբանի անձնաւորութիւնը, գործը, բանած ընթացքը չէ, այլ այն հարցը, թէ կարող է առհասարակ մի զարգացած, տիեզերքի կազմութեան և Գարվիլի տեսութեան ծանօթ մարդ համոզմունքով քրիստոնէայ լինել, գիտութիւնից դուրս զուտ կրօնական — քրիստոնէական ճշմարտութիւններ ընդունել, գիտութեան միջոցաւ ուսումնասիրել և ուսուցանել. իսկ այդտեղից աստիճանաբար բարձրանալով պէտք է հարցնենք, ինչպէս վերեն ակնարկեցինք, թէ ինքը քրիստոնէութիւնն ի՞նչ է, ի՞նչ նշանակութիւն ունի մարդկային կեանքի համար:

Այսպէս մերկ հարց դնելը հեշտ չէ

հարկաւ: Այն հանդամանքը, որ արևմտեան — միջնադարեան եկեղեցին խէթ աչքով է նայել արդի գիտութեան յառաջդիմութեան վերայ, նորա արդիւնքը՝ իրերի և երևոյթիւնների վերաբերութեամբ նորա գործ դրած անողոր քննադատութիւնն, իրրև իւր համար խիստ վտանգաւոր մի ինչ նկատել ու յաճախ ժխտել, կարծել է ապիս շատ շատերին, թէ քրիստոնէութիւնն առհասարակ իւր բոլոր երևոյթներով մէկտեղ պէտք է վախենայ, պէտք է թաղչի գիտութեան լոյսից և համարձակութիւն չունենայ քննադատութեան ասպարէզ ելնելու: Բայց մենք, որ համոզուած ենք, թէ քրիստոնէութիւնն իրրև երկնային լուսոյ ծնունդ և մաքուր ճշմարտութեան ուղեցոյց՝ չի կարող խոյս տալ որ և է ճշմարտութիւն հրապարակ հանելուց կամ քննադատութիւնից, կարևոր ենք համարում պարզութիւնը մանաւանդ ներկայ ժամանակ, երբ, կարելի է ասել, ամենամեծ պահանջը քրիստոնէութեան համար նորա վարկի վերականգնումն է լուսաւորեալ աշխարհի առաջ: Այդ աշխարհում, երոպական քաղաքակրթութեան կենտրոններում, գիտութիւնը վաղուց է կասկածի ենթարկել քրիստոնէական ճշմարտութիւնները և լայն դուռ բացել ամէն տեսակ քննադատութեանց համար. բայց այնտեղ ևս քրիստոնէական կրօնի գիտնականներկայացուցիչներն ու անկեղծ նախանձախնդիրները վերջին ժամանակներս միայն այն եզրակացութեան են եկել, որ եղած կասկածները փարատել և քրիստոնէութիւնը կրթուած դասին մատչելի դարձնել կարելի չէ, եթէ ոչ իրենց կողմից ևս ազատ տեղ տալով լուրջ գիտնական քննադատութեան, իւրաբանիւր երևոյթ մինչև հիմքը թափանցելով ու դուռ ճշմարտութիւնը, գաղափարական սկզբունքներն ի վեր հանելով: Այս տեսակէտից նշանաւոր է պրոֆ. Հառնակի մի գրուածքը, որ լոյս տեսաւ անցեալ տարի և մեծ աղմուկ հանեց Գերմանիայում: Այդ գրուածքը, որի վերնագիրն է «Քրիստոնէութեան իսկութիւնը»*, ամփոփում է իւր մէջ

1899—1900 թ. ձմեռային վեցամսեակին Բերլինի համալսարանի բոլոր բաժիններին պատկանող 600 ուսանողներին առաջ կարգացուած 16 ազատ դասախօսութիւններ: Աշխարհաչափ գիտնական — ասուածաբանը խօսում է ուրեմն այնպիսի մի երիտասարդութեան հետ, որ ժամանակակից քաղաքակրթութեան բարձրութեան վերայ է կանգնած և համակուած է ամբողջապէս իւր դարու գաղափարներով, նա նպատակ է դնում, ինչպէս նախաբանի մէջ ակնարկում է, պատմագիտական եղանակով՝ դուռ պատմական իրողութիւնները կշռելով, միջոց տալ «ճանաչելու էականն ու մնայունը երևոյթների մէջ» և տեսնելու, որ քրիստոնէութիւնը*, որչափ և տարբեր համայնքների ու ուղղութիւնների բաժանուած, ներքուստ մի է՝ նոյն կեանքի աղբիւրը բոլոր քրիստոնեաների համար: Մենք ևս կաշխատենք, քայլ առ քայլ նորան հետեւելով, առանց միշտ նորա մտքերը փոխ առնելու, այլ միայն նորա յարուցած խնդիրները շոշափելով և մեր ընթերցողների ըմբռնմանը յարմարուելով՝ ցոյց տալ հետզհետէ մի շարք յոգուածներ մէջ, թէ ինչն է քրիստոնէութեան էականն ու մնայունը, և ապա, եթէ ժամանակը ներէ, թէ մեր եկեղեցական կեանքի որ երևոյթների մէջ և ինչ ձևով արտայայտութիւն է գտնում այդ մնայունն ու էականը. կամ ինչ նոր երևոյթներ պէտք է յառաջ գան, ինչպէս ձևակերպուին, որպէս զի արտայայտութիւն գտնէ:

Ինչ է քրիստոնէութիւնը, այդ հարցին կարելի է զանազան եղանակով բացատրութիւն տալ: Կարելի է ասնել ընդհանուր կամ մի որոշ եկեղեցոյ դաւանութիւնը և ջատագովել, յառաջ բերել մի առ մի քրիստոնէութեան ընդունած ճշմարտութիւնները, և նոցա դէմ հանած առարկութիւնները հերքելով, նոցա կարևորութիւնն ու հիմնաւորութիւնը ցոյց տալ, նոցա նշանակութիւնը պարզել, Կարելի է նաև փիլիսոփայական դատողութեան առարկայ դարձնել՝ նախ կրօնն առհասարակ իրրև հոգեբանական ու հասա-

* Das Wesen des Christentums.—Adolf Harnack. Leipzig, 1900.

* Նա ինքը բաւեարանական քրիստոնէութիւն է ասում:

բակական կեանքի երեւոյթ, և ապա քրիստոնէութեան տեղը որոշել այլևայլ կրօնների շարքում: Սակայն Հառնակ ոչ դաւանաբանական—ճատագրական և ոչ փիլիսոփայական տեսակէտով է առաջնորդուում, այլ հետեւում է, ինչպէս ակնարկեցինք, պատմագիտական եղանակին, և իրաւամբ, մեր ժամանակն ամէն բանի մէջ դրական փաստեր է որոնում, և ժամանակակից մարդոց համար համոզեցուցիչ փաստ ոչ թէ այս կամ այն մարդու ընդունածն ու մտածածն է, այլ մերկ իրողութիւնը, իսկ քրիստոնէութեան նկատմամբ անհերքելի իրողութիւնը, որ և հաստատուն հիմք կարող է լինել ուրիշ իրողութիւնների և փաստերի համար՝ այն է, որ նա պատմական անցեալի մէջ իւր որոշ տեղն ու դերն է ունեցել՝ հանդէս է եկել, զարգացել, ու մեղ հասել որոշ պայմաններով և որոշ հանդամանքներով: ուստի և պատմութիւնից սովորելով, թէ ինչ է եղել նա՝ մենք միջոց կունենանք եղրակացնելու, թէ ինչ է իւր էութեամբ և ինչ պէտք է լինի այժմ:

Յիսուս Քրիստոս և իւր քարոզած աւետարանը—ահա այն կենտրոնը, որից սկիզբ է առնում քրիստոնէութիւնը և գէպի որը դառնում է միշտ՝ նոր կեանք, նոր լոյս ընդունելու համար: Սակայն սխալ կլինի կարծել, թէ քրիստոնէութեան իսկութիւնը պարզաձ լինելու համար՝ բաւական է միայն Քրիստոսի պատկերը վերակենդանացնել և նորա աւետարանի հիմնական գծերը բացատրել: Նախ որ Քրիստոսի գործն ու խօսքը մեզ ոչ թէ անմիջական ազդելից՝ նորա սեփական նկարագրութիւնից կամ պատմութեամբից է յայտնի, այլ նորա շրջապատողների ընդունած տպաւորութիւնից, նորա հետևողների գրուածներից. ուրեմն մեղ ծանօթ պէտք է լինի առնուազն քրիստոնէութեան առաջին դարը՝ դասական շրջանը, որպէսզի կարողանանք ուզիղ դադափար կազմել նորա մասին: Ապա, որովհետև քրիստոնէութիւնն սկզբից և եթ կօչուած էր ամբողջ աշխարհում տարածուելու և մարդկային կեանքի բոլոր խաւերը, բոլոր երևոյթները թափանցելու, ուստի ամբողջ պատմութիւնը պէտք է վկայ լինի նորա ոյժի և կենսունակութեան, նո-

րա ամբողջ պատմական անցեալը պէտք է աչքի առաջ ունենալ, քննել նորա բազմակողմանի ազդեցութիւնը ազգերի կեանքի վերայ՝ նորա վերակազմող և կենսագործող ընտրութիւնը հասկանալու համար: Գորանով խնդիրն է հարկէ աւելի դժուարանում և բարդուում է, և գրեթէ անլուծանելի կղաւնար, եթէ աւետարանի քարոզութիւնը մի սովորական երևոյթ լինէր պատմական ուրիշ երևոյթների շարքում՝ այնպէս շարուած նուցա հետ, որ մենք դժուարանայինք շատ դէպքում նորա հետքերը գտնել, նորա արդիւնքը որոշել: Բայց իրօք նա այնպիսի բնորոշ յատկութիւններ ունի, այնչափ բարձր է ու առանձնացած միշտ իւր շրջապատից, որ այդ դժուարութիւնը վերանսում է, և նորա տարածման ու զարգացման որքան ընդարձակ և բազմակողմանի ասպարէզ լինի մեր աչքի առաջ՝ նոյքան առատ միջոց կունենանք որոշելու այն, որ էական է և յարատև քրիստոնէութեան մէջ, որ այլևայլ հանդամանքներում այլևայլ փայլով ու զօրութեամբ է հանդէս գալիս, առանց իւր ներքին բնութիւնը փոխելու: Այնուամենայնիւ առաջին և ամէնից մեծ տեղը բռնում է այստեղ հարկաւ Քրիստոսի աւետարանը իւր նախնական վիճակում, այնպէս ինչպէս արտայայտուել է նոյն իսկ Քրիստոսի անձի, կեանքի, գործի, խօսքի մէջ, ինչպէս ըմբռնում ենք մենք նորա կեանքը նկարագրող սկզբնական ազդելիքներից: Ապա պէտք է տեսնենք, թէ նոյն աւետարանն ինչ տպաւորութիւն է գործել Քրիստոսի անմիջական հետևողների վերայ և ինչ արդիւնք յառաջ բերել քրիստոնէական առաջին համայնքի մէջ: Ետոյ արդէն կաշխատենք պատմութեան ընթացքում նորա կրած գլխաւոր փոփոխութիւնները քննել և այն աչքի ընկնող երևոյթները հասկանալ, որոնց մէջ բնատրիչ արտայայտութիւն է գտել:

կ, վ.

